Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2017 թվականի դեկտեմբերի 11-ից 15-ը քաղաք Բանգկոկ գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Արման Խաչատրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Թաիլանդի Թագավորություն՝ քաղաք Բանգկոկ, 2017թ. դեկտեմբերի 11-ից 15-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողով:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու կառավարման խմբի և Ասիական մայրուղու ցանցի հարցերով աշխատանքային խմբի 7-րդ հանդիպումներին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2017 թվականի դեկտեմբերի 12-ից 13-ը Թաիլանդի Թագավորության Բանգկոկ քաղաքում կայացել է Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու կառավարման խմբի հանդիպումը, որին դեկտեմբերի 13-ից 15-ը հաջորդել է Ասիական մայրուղու ցանցի հարցերով աշխատանքային խմբի 7-րդ հանդիպումը:

Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու կառավարման խմբի հանդիպման ընթացքում քննարկվել են

Ասիական մայրուղու ցանցի օպտիկամանրաթելային մալուխների ընդլայնման հնարավորությունները:

Ասիական մայրուղու ցանցի հարցերով աշխատանքային խմբի 7-րդ հանդիպման ընթացքում մասնակից երկրները ներկայացրել են թարմացված տեղեկատվություն Ասիական տրանսպորտային և երկաթուղային մայրուղու ներկա իրավիճակի և զարգացման հեռանկարների մասին:

Աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Ասիական մայրուղու ցանցի միջկառավարական համաձայնագրում առաջարկվող փոփոխությունները:

Լիագումար նիստերի ընթացքում քննարկվել են մասնակից երկրների տնտեսական հնարավորությունները, ներկայացվել են վերոնշյալ ոլորտներում Հայաստանի առաջընթացը, ինչպես նաև տրանսպորտային ենթակառուցվածքների և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերն ու հեռանկարները:

Մասնակիցները քննարկել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի ընթացիկ աշխատանքներում և ծրագրերում առավել ակտիվ ներգրավվածության հնարավորության հարցը:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Այցի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Արման Խաչատրյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի ՏՀՏ բաժնի պետ Տիցիանա Բոնապասի, տրանսպորտի բաժնի պետ Յուվեի Լիի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Շամշադ Ախթարի հետ:

♦ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու կառավարման խմբի և Ասիական մայրուղու ցանցի հարցերով աշխատանքային

խմբի հաջորդ բարձրաստիճան հանդիպումները 2018 թվականին անցկացնել Երևանում:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

  Արման Խաչատրյան

  18.12.2017թ.